# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կենցաղային, տնտեսական, գրասենյակային ապրանքների և տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունիսի 12-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի ապրիլի 10-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված 1500 հատ տնտեսող լամպերից 400 հատ տնտեսող լամպերի, 4-րդ չափաբաժնով նախատեսված 1500 հատ տնտեսող լամպերից 400 հատ տնտեսող լամպերի մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը 2026թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 12.06.2024Թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«10» «04» 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Թ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 12.06.2024թ. կնքված N «ԴԴ ԷԱՃԱՊՁԲ-24/12-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված 1 500 հատ տնտեսող լամպերից 400 հատ տնտեսող լամպերի մասով նախատեսված 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնով նախատեսված 1 500 հատ տնտեսող լամպերից 400 հատ տնտեսող լամպերի մասով նախատեսված 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը 2026թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *Դատական դեպարտամենտ* | *ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ* |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 01040645 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 1930065834900 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Թ. Հովհաննիսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 1**

**« 10 » « 04 » 2026թ. կնքված N 5 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 12 » « 06 » 2024թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-1» ծածկագրով պայմանագրի)*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 31531300/12 | Տնտեսող լամպեր | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | **1 600 000** |
| 4 | 31531300/13 | Տնտեսող լամպեր | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | **1 600 000** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
***ՖՈՒԴ ՄՈՒԴ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7
ՀՎՀՀ՝ 01040645
Հ/Հ՝ 19300658434900
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Թ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.